ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Աշխեն Շիրվանյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության բաժնի պետ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2018 թվականի հունիսի 19-20-ը
4.	Հրավիրող կողմը	Եվրասիական տնտեսական հանձնաժողով
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Մասնակցություն Եվրասիական տնտեսական միության միասնական տնտեսական տարածքի և Մաքսային միության շրջանակներում անասնաբուժության բնագավառում օգտագործվող դեղամիջոցների շրջանառության նկատմամբ միասնական մոտեցումների ձևավորման համար աշխատանքային խմբի նիստին: Եվրասիական տնտեսական միության անդամ-պետություններում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության ներկայիս գործընթացին վերաբերող հարցերը և խնդիրները:
6.	Քննարկված թեմաները	Նիստի ընթացքում քննարկվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների շրջանառության կանոնակարգման կանոնները հաստատելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագիծը, ինչպես նաև ԵԱՏՄ մաքսային տարածքում անասնաբուժական նշանակության ախտորոշիչ և ախտահանիչ միջոցների գրանցման սխեմաներին և շրջանառությանը, անասնաբուժական դեղամիջոցների ու կերային հավելումների հարցերով ԵԱՏՄ-ի փորձագիտական խորհրդի իրավասությունների ընդլայնմանը վերաբերող հարցեր:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Կայացել են հանդիպումներ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումների դեպարտամենտի և ԵԱՏՄ անդամ-պետությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են՝ - «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական

		դեղամիջոցների շրջանառության կանոնակարգման կանոնները հաստատելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագիծը, - ԵԱՏՄ անդամ-պետություններում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության ներկայիս գործընթացի վերանայման անհրաժեշտությունը և համապատասխանեցումը շրջանառության մեջ գտնվող «ԵԱՏՄ-ի մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության կանոնակարգման» վերաբերյալ Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի նախագծով նախատեսվող պահանջներին:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածություններ, ստորագրված փաստաթղթերը	Քննարկման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն վերանայել ԵԱՏՄ անդամ-պետություններում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության ներկայիս գործընթացը և այն համապատասխանեցնել շրջանառության մեջ գտնվող «ԵԱՏՄ-ի մաքսային տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման և շրջանառության կանոնակարգման» վերաբերյալ Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի նախագծով նախատեսվող պահանջներին:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կողմից ներկայումս մշակվել և ներկայացվել է շահագրգիռ կառույցներին «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1335-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների շրջանառությունը: Միաժամանակ, ներկայումս իրականացվում են միջոցառումներ Հայաստանի Հանրապետության տարածքում անասնաբուժական դեղամիջոցների գրանցման ժամանակ անհրաժեշտ լաբորատոր և թղթային փորձաքննությունների պատշաճ և լիարժեք իրականացման գործընթացի ապահովման նպատակով:

10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության բաժնի պետ Աշխեն Շիրվանյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	19.07.2018թ.